նեի մի քանի գրագիրների հետ միասին, այդ հրամանագրերը գրելու համար մնացել էր ծառայություն մատուցանելու վերոհիշյալ բարձրաստիճան գործիչներին, և չորս ամիս շարունակ, գիշեր թե ցերեկ այս մեծ գործով էինք զբաղված»[3]։

Որ իսկապես որոշ դեպքերում հաշվի էին առնվում թիուլդարների ցանկությունները, այդ երևում է նաև «Վրաստանի թանգարանի» ձեռագրատան արխիվային բաժնի մի քանի ֆերմաններից։ 1695 թ. Ասլան բեկ և Լվարսաբ բեկ Բրաթելիները դիմում են Շահ Սուլթան Հուսեյնին խնդրելով, որ իրենց ոռճիկի դիմաց թիուլիներ տրվեն Ղարաբաղի օլքայի Սղնախ կոչվող վայրից. իսկ շահը պատասխան գրությամբ հայտնում է, որ այդ մահալի բոլոր օբյեկտները արդեն բաշխված են և ազատ վայրեր չկան[4]։ Շատ ավելի հետաքրքիր է 1703 թ. վերաբերող մի այլ վավերագիր, ըստ որի կախեթցի Ռուստամ բեկի որդի Բաղադե բեկը հրաժարվում է իր համեսալեից, որը իր հոր մահվանից հետո փոխանցվել էր նրա անվան։ Այդ գումարը նա պետք է ստանար Բաքվի նավթի և աղի հանքերից գանձվող հարկերի հաշվից։ Պատճառաբանելով, որ հիշյալ օբյեկտը իր բնակավայրից շատ հեռու է, որի պատճառով համարյա ոչինչ չի կարողանում ստանալ, Բաղադե բեկը խնդրում է այդ համեսալեն ետ վերցնել և դրա փոխարեն թույլատրել իրեն ամեն տարի այդ գումարը ստանալու դիվանի գյուղերի կապալառու, Լենքորանի հաքիմ Աբբասկուլի խանից։ Բաղադե բեկի այս խնդիրքը հարգվում է և կարգադրվում է մեծ մուսթովֆիներին նրա համեսալեն անմիջապես գանձել հօգուտ դիվանի[5]։

Դիվանի գյուղերը գրանցված էին հատուկ մատյաններում, որոնք գտնվում էին տվյալ խանության կամ վիլայեթի ֆինանսական վարչության պետի «սահիբ-թովջիհ-ե դիվանի» մոտ և կոչվում էին «դիվանական հարկային մատյաններ» (դաֆթիր-ե թովջիհ-ե դիվան)։ Այդ մատյաններից դուրս բերված առանձին քաղվածքներից, որոնք պահպանվել են շահական հրովարտակներում և շարիաթական ֆեթվաներում, պարզվում է, որ գյուղերը դասակարգված են եղել ըստ մահալների, յուրաքանչյուրի ներքևում նշելով ամեն տարի այդ վայրից ստացվող հարկերի քանակը[6]։ Երևանի վիլայեթի կամ Զուխուր-Սա՝ դի բեկլարբեկիության դիվանի գյուղերի ցուցակը պահվում էր Թավրիզում, որտեղ նստում էին Ադերբայջանի վեզիրը և երկրի հյուսիս-արևմտյան նահանգների գլխավոր մուսթովֆին[7]։

Նարատիվ աղբյուրներն ու դիվանական վավերագրերը միաբերան վկայում են, որ տարբեր եղանակներով բռնագրավված և «դիվանի» դարձված գյուղերի եկամուտները մեծ մասամբ ոռճիկի դիմաց հատկացվում էին զինվորականությանն ու պետական պաշտոնյաներին։ Այդ նշանակում է, որ դիվանի հողերից ստացվող եկամուտները XVI—XVII դարերում չէին կենտրոնացվում պետական

---

[3] تاریخ عالم‌آرای عباسی، جلد دوم، ص. ۳۴۴–۳۴۵

[4] Տե՛ս Սպարսկոլը ոստորոյոլ Սաբոտոցեր Սաքարտվելոս ՝ցոցնտսաբացեբՇը, գամոսցա, ցլ. ֆոտոտրոիժմ, տեսլոսոս, 1965, գիրք I, պրակ 3, վավ. 3։

[5] Տե՛ս Մ ա ք ա ր Ե ա ն ա, Սաքարտվելոս Մոտեոտմոս սպարսկոլը ֆորմանեբը դա ՝ոքմեբը, տեսլոսոս, 1949, էջ 44։

[6] Տե՛ս Մատենադարան, կթդկ. դիվան, թղթ. 2ա, վավ. 6, 14, 22, 63, թղթ. 2բ, վավ. 111, 107ա, 107բ, թղթ. 1դ, վավ. 359 և այլն։

[7] Նույն տեղում, թղթ. 1ա, վավ. 56։